ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 օգոստոսի 2023 թվականի N 1417 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի N 495-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի և 34-րդ հոդվածի պահանջ-ները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 11-ի «Ձրառ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը նվազեցնելու, գույք ամրացնելու և անհատույց օգտագործման իրավունքով տարածքներ հանձնելու մասին» N 495-Ա որոշման 1-ին և 5-րդ կետերը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝

1) «1. Թույլատրել Հայաստանի Հանրապետության տարածքային կառա-վարման և ենթակառուցվածքների նախարարության «Ձրառ» փակ բաժնետի-րական ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Արմենակյան 125/3 հասցեում գտնվող՝ 207327686 դրամ հաշվեկշռային արժեքով, սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ 7010.6 քառ. մետր մակերես ունեցող շենքով և 7.7 քառ. մետր (5.9 և 1.8 քառ. մետր)

մակերես ունեցող շինություններով, ինչպես նաև դրանց զբաղեցրած, պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ (հատկացված) ընդհանուր՝ 0.52265 հեկտար բաժնային սեփականություն հանդիսացող հողամասով (այսուհետ՝ գույք) վճարել ընկերության կողմից տեղաբաշխված՝ պետությանը պատկանող համապատասխան թվով բաժնետոմսերի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռքբերման դիմաց։».

2) «5. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի նախագահին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 11-ի «Ձրառ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը նվազեցնելու, գույք ամրացնելու և անհատույց օգտագործման իրավունքով տարածքներ հանձնելու մասին» N 495-Ա որոշման փոփոխությունն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում ընկերության տնօրենի և Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի հետ համատեղ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի հանձնման-ընդունման աշխատանքների իրականացումը։»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

24.08.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ